

ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«Սիսիանի ավագ դպրոց» ՊՈԱԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԿՈՂ ՈՒՍՈՒՑԶԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման`

ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՖԻԶԻԿԱ ԱՌԱՐԿԱՅԻ
ՂԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ուսուցիչ` Կարինե Մկրտչյան
Սյունիքի մարզ Ծղուկի միջն. դպրոց
Ղեկավար` Վարդանյան Հասմիկ

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3 .
Ստեղծագործականությունը դասավանդման մեջ	5
Ֆիզիկա դասավանդման մեթոդներ	6
Փորձարարական մաս	9
Վերլուծություն	15
Եզրակացություն.....	16
Օգտագործված գրականության ցանկ	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Մանկավարժը պետք է
երեխային վերաբերվի այնպես,
կարծես նա հենց այնպիսին է,
ինչպիսին, որ կուզենար նրան տեսնել:
Լ.Վիգոտսկի

Հիրավի, ուսուցիչը կարող է իր խոսքով, արարքով կամ վերաբերմունքով թևեր տալ աշակերտին կամ ընդհակառակը, փշրել այդ թևերը: Նա պետք է կարողանա նույնիսկ ամենաթույլ կամ խնդիրներ ստեղծող սովորողի մեջ գտնել այն լավը, որ կբարձրացնի և կոգևորի իր սանին, կխրախուսի, մոտիվացիա կստեղծի դասերին ինտեգրվելու, շրջապատի հետ հաղորդակցվելու և լիարժեք քաղաքացի կերտելու համար:

Ջարմանալի բազմազան և տպավորիչ իրադարձություններով հարուստ «կենսագրություն» ունի ֆիզիկան:

Ծնունդ առնելով խոր հնադարում պարզագույն դիտումների և ընդհանրացումների հիման վրա, ֆիզիկան այսօր աշխարհի ու նրա օրենքների մասին մի կուռ գիտական համակարգ է, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից գիտությունը:

«Ֆիզիկան բոլոր գիտություններից ամենահիմնավոր ամենապարփակ գիտությունն է:

Հսկայական է նրա ազդեցությունը ողջ գիտության զարգացման վրա», - գրել է նոբելյան մրցանակի դափնեկիր Ռիչարդ Հեյմանը:

Ֆիզիկան համամարդկային մշակույթի կարևորագույն մասն է: Այն դարձել է գիտության զարգացումն ապահովող իրական ուժ: Ֆիզիկան հնարավորություն է ընձեռնում բավարարել մարդու անսպառ հետաքրքրասիրությունը, առաջադրում խնդիրներ անհայտ, չհետազոտված բնագավառներում: Յուրաքանչյուր նոր գաղափար, նոր փորձ ընդարձակում է մարդու ճանաչողության սահմանները և թույլ է տալիս թափանցել բնության գաղտնիքների մեջ:

Փորձը ամենալավ սովորեցնող ուսուցիչն է:

Արդի ժամանակների գիտատեխնիկական առաջընթացը SՀS ոլորտի զարգացման ընձեռնած հնարավորությունները, արհեստական բանականության կիրառելիության ոլորտների ընդարձակումը պահանջում է կրթել և դաստիարակել գիտելիքներով զինված, ստեղծագործող, նախաձեռնող և սեփական տեսակետն արտահայտող սովորող:

Կրթական հաստատությունը սովորողին պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ, անհրաժեշտություն է առաջանում ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կարողունակությունները ձևավորման գործընթացը և: Կարողունակությունները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի

փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը:

Մեր օրերում կրթության առջև ծառայել է ևս մի կարևոր խնդիր՝ ուսուցման կազմակերպման ձևերի փոփոխության հարցը: Գիտության, տեխնիկայի արագ զարգացման պայմաններում կարևոր նշանակություն ունի սովորողների մոտ ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը, որն էլ խթանում է վստահություն սեփական ուժերի հանդեպ, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն: Սովորողի մոտ ինքնուրույն գործելու, որոշումներ կայացնելու, նախաձեռնողական վարք ձևավերելու համար առաջնային նախապայմաններ են հանդիսանում ուսումնական գործընթացի ժամանակ հնարավորություններ ստեղծել, որպեսզի սովորողը հնարավորություն ունենա որոշում կայացնելու, այս կամ այն խնդրի վերաբերյալ պատասխանատվության գիտակցում ձևավորելու, աստիճանաբար ձգտի կայացման ու ձեռքբերումների: Անշուշտ, այս ամենի համար առաջին հերթին կարևոր է, որ սովորողը ուսումնական գործընթացից կարողանա ստանա առավելագույնը: Ի վերջո, սովորողը, պասիվ դաշտից ակտիվ դաշտ գալով, դառնում է էլ ավելի ինքնուրույն, նախաձեռնող, փորձում է ստեղծագործաբար մտածել ու գործել՝ արդյունքում ամբարելով գիտելիքների, հմտությունների ու կարողությունների կայուն պաշար:

Այսպիսով, կարծում ենք, որ նորագույն մեթոդներով հագեցած ու տեխնոլոգիապես հագեցած դասեր իրականացնելով՝ ուսուցիչը հեշտությամբ կարող է հասնել կրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին՝ խթանելով սովորողների ինքնուրույն գործելուն, նախաձեռնող ու նորարար լինելուն և ստեղծագործաբար գործելուն: Այս ունակությունների զարգացումը կարելի է իրականացնել նաև բնագիտական առարկաների՝ մասնավորապես ֆիզիկայի դասավանդման շրջանակներում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է ուսուցիչի կողմից սովորողի մոտ հետաքրքրություն առաջացնելու, նախաձեռնելու, հետազոտելու, ինքնուրույն կշռադատելու, ստեղծագործական մտածելու կարողունակությունների զարգացման անհրաժեշտությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ ունակությունները մերօրյա իրականության շարժիչ ուժն են հանդիսանում:

- ❖ Հետազոտության նպատակը՝ հետազոտել ֆիզիկա առարկայի միջոցով սովորողի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը խթանելու եղանակներն ու մեթոդները:
- ❖ Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է հիմնավորել ուսումնական գործընթացում սովորողի ինքնուրույն գործելու, որպես նախաձեռնող հանդես գալու կարևորությունը, ինչպես նաև ցույց տալ ուսուցչի կողմից ընտրված ուսուցման ձևերի ու մեթոդների դերը ֆիզիկա առարկայի դասաժամին սովորողի մոտ ստեղծագործ ունակությունների զարգացման խնդրում:

Ստեղծագործականությունը դասավանդման մեջ

Ուզում եմ անդրադարձս սկսել Քեն Ռոբինսոնի խոսքերով.<<Բոլոր մարդիկ գործունեության այս կամ այն ոլորտում ունակ են գրանցելու ստեղծագործական նվաճումներ ճիշտ պայմանների, ինչպես նաև համապատասխան գիտելիքների և հմտությունների առկայության պարագայում>>: Կրթության մեջ գնալով ավելի է մեծանում ստեղծագործականության դերը ուսուցման մեջ:Քանի որ դա խթանում է սովորողի երևակայությունը, վերլուծելու կարողությունը, նպաստում է ինչպես ստանդարտ այնպես էլ նոր իրավիճակներում արագ կողմնորոշվելու, գործելու, հարմարվելու հատկությունների ձևավորումը:Ահա այս ամենի մեջ շատ կարևոր դեր է վերապահվում ուսուցչին: Ժամանակակից ուսուցիչը նախ ինքը պետք է լինի ձկուն, ստեղծագործ, իր դասերին ապահովի ստեղծարար միջավայրի և ուսուցման տարաբնույթ մեթոդների կիրառումը: Նա ճանաչելով երեխաներին և նրանց առանձնահատկությունները պետք է ապահովի սովորողներին տրվող ազատությունը, իրենց հույզերը և տարբեր կարծիքները արտահայտելը, նպաստի դերային խաղերով կամ էլ բանավեճերով, խրախուսի անգամ փոքրիկ, բայց յուրատեսակ քայլերը:

Այս ամենը իմանալով յուրաքանչյուր ուսուցիչ իր ռազամավություններով պետք է նպաստի ստեղծագործականությանը:Իմ առարկան ֆիզիկան է, ինչը կարծում եմ նպաստող է, քանի որ սովորողները միշտ էլ հետաքրքրված են շրջապատող բնությամբ, հաճույքով են կատարում ուսումնասիրություններ, դիտարկումներ:Տարվա վերջին ես սովորողներին տալիս եմ տարբեր բնույթի ամառային առաջադրանքներ, որոնք նպաստում են սովորողների ստեղծարարությանը, դրանցից են. ինքնաշեն սարքերի պատրաստում , մահվան օդակի պատրաստում, լույսի սպեկտի սպիտակ լույսի ստացումը ցորցադրող սարք, հարկադրական տատանումների սարքի պատրաստում և այլն:Ստեղծարարությանը շատ է նպաստում նաև տարբեր մոդելների պատրաստումը սովորողների կողմից: Շատ դասեր ընթանում են բանավեճի մեթոդով, որը հնարավորություն է տալիս ազատորեն արտահայտել իրենց կարծիքները, առաջ քաշելու նոր հիպոթեզներ: Կարծում եմ այս բոլորը բարձրացնում են նրանց հետքերքրվածությունը, մոտիվացիան ինքնուրույն աշխատելու, զարգացնում է համադրելու, հակադրվելու, վերլուծելու կարողությունները, ինչն էլ հիմք կարող է հանդիսանալ ստեղծագործականությանը:Հաճախ դասապրոցեսում հանձնարարում եմ դերային խաղեր, շարադրարություններ, օրինակ «Մեկ օր տիեզերքում», « Ինչպե՞ս կդիմանամ անկշռելիության պայմաններում», «Ի՞նչ է մարդուն պետք տիեզերանավում» և այլ թեմաներով: Հանձնարարություն եմ տալիս հետևել ռեզոնանսային երևույթներին, կատարել դիտումներ, հնարավոր փորձերի ինքնուրույն կատարում: Վերջին շրջանում որոշակի խմբերի հանձնարարում եմ համագործակցային, հետազոտական նախագծերի իրականացում: Օրինակ մեկ խմբի հանձնարարել էի աշխատանք՝ ուսումնասիրել օպտիկական երևույթները մթնոլորտում, մեկ այլ խմբի հանձնարարել էի ֆիզիկական երևույթների փոփոխությունը և այլն: Այս ամենով պետք է օգնել, որ երեխայի մոտ զարգանա սեփական գաղափարների համար պաթարելու հատկությունը, եթե անգամ դրանք չեն համընկնում խմբի մնացած անդամների կարծիքին:Սակայն սովորողները պետք է կարողանան նաև կողմնորոշվել, թե երբ արժե տարբերվել և ինքնատիպ լինել, իսկ երբ համաձայնել: Սովորողներին պետք է տալ ազատություն, նրանք իրենց աշխատանքից կամ խաղից պետք է հաճույք ստանան: Սակայն որպեսզի այն չդառնա առօրեական և ծանձրալի, պետք է առաջ քաշել տարաբնույթ խնդիրներ, որոնք ստեղծարար լուծման կարիք ունեն:Շատ նպաստող է նաև ինտեգրված դասերի անցկացումը բնագիտական առարկաներից, որը հնարավորություն է տալիս տարբեր առարկաներից ստացած գիտելիքները և հմտությունները կիրառելու ֆիզիկայի մեջ:Ահա այս ամենին է, որ պետք է նպաստի ուսուցիչը, փոփոխելով նաև իր մտածելակերպը և իր ռազամավարությունը: Այս ամենին ձգտում եմ նաև ես:

Ֆիզիկայի դասավանդման մեթոդներ

Ուսուցիչը ազատ է մեթոդների ընտրության հարցում, սակայն մեթոդներ ընտրելիս հարկավոր է հաշվի առնել դասի նպատակը, խնդիրները, ուսումնական նյութի ծավալը, բարդության աստիճանը, առարկայական գիտելիքների մակարդակը, ժամանակը, սովորողների տարիքն ու աշխատունակությունը: Այստեղ ամենակարևորն ու առաջնային նպատակն է, որը ցանկալի և նախապես կանխատեսելի վերջնարդյունքն է. Սովորողը ինչ պետք է իմանա, ինչ կարողանա, ինչը արժևորի:

Ուսուցման մեթոդները չեն կարող լինել լավ կամ վատ: Դրանք միայն կարող են չհամապատասխանել այլն նպատակներին, որոնց հասնելու համար օգտագործվել են: Որքան հարուստ է ուսուցչի զինանոցը, այնքան ավելի արդյունավետ է նրա դասը:

- ❖ Ֆիզիկայի դասավանդման կարևորագույն բաղադրիչներից է խնդիրների լուծումը, որը ամրապնդում է սովորողների տեսական գիտելիքները գործնականում կիրառելու կարողություններն ու հմտությունները: Փորձը խթանում է սովորողի իմացական հետաքրքրությունները, ստեղծագործական ունակությունները, տրամաբանական մտածողությունը: Այն աշխատասիրության, հետևողականության, նպատակին հասնելու անհրաժեշտ միջոց է:

Ֆիզիկայի խնդիրների տեսականին բազմազան է: Հայտնի են որակական, քանակական, փորձարարական, գնահատումների, օլիմպիական, չափայնությունների մեթոդով լուծվող, հաշվողական, գրաֆիկական և այլ տեսակի խնդիրներ, որոնց լուծման մեթոդներին սովորողները ծանոթանում են ֆիզիկայի դպրոցական դասընթացում: Ֆիզիկայի խնդիրների դասակարգման միանշանակ ընդունելի տարբերակ դեռևս գոյություն չունի: Ֆիզիկայի հայտնի խնդրագրքերում հատուկենտ դեպքերում կարելի է հանդիպել ֆիզիկայի այնպիսի խնդիրների, որոնք պետք է լուծվեն ապացուցման մեթոդով: Ֆիզիկայի ուսուցման գործընթացում լուծվող ամեն ուսումնական խնդիր սովորողի կատարած յուրահատուկ հայտնագործություն է, քանի որ նա դա կատարում է առաջին անգամ: Հետևաբար՝ ուսումնական խնդիրները, պետք է կազմվեն ու առաջադրվեն պարզից դեպի բարդը սխեմայով ու սովորողի անհատական հնարավորությունների հաշվառմամբ՝ հաշվի առնելով բովանդակային տեսական նյութի իմացության աստիճանը և գործնականում դրանք կիրառելու ունակությունները: Ապացուցման մեթոդով լուծվող ֆիզիկայի խնդիրն էապես տարբերվում է ֆիզիկայի ավանդական կամ դասական խնդրից: Ինչպես հայտնի է, ֆիզիկայի խնդիրն օբյեկտիվ հասկացություն է, որն արտացոլում է որևէ ֆիզիկական երևույթ կամ ֆիզիկական համակարգ, որոնք բնութագրող որոշ ֆիզիկական մեծություններ մեզ հայտնի չեն և կոչվում են խնդրի անհայտ տարրեր: Լուծել խնդիրը, նշանակում է որոշել նրա անհայտ տարրերը: Սովորաբար, ֆիզիկայի խնդիրը լուծվում է տրամաբանական եզրահանգումների, մաթեմատիկական գործողությունների կամ ֆիզիկական փորձի օգնությամբ՝ օգտագործելով ֆիզիկայի օրենքներն ու մեթոդները:

Խնդիր լուծելը հասարակ գործ չէ, և պահանջում է ուժերի մեծ լարում, այն կարող է իր հետ բերել ստեղծագործ աշխատանքից ստացված բերկրանքի զգացում, ինչպես նաև սեր առարկայի և գիտության հանդեպ, կամ հակառակը՝ հակակրանք դեպի առարկան:



- ❖ Ֆիզիկայի ուսուցման գործընթացում կարևոր դեր ունեն նաև լաբորատոր աշխատանքները, որոնք զարգացնում են գործնական հմտություններն ու ունակությունները: Լաբորատոր աշխատանքների կատարումը զարգացնում է տեսական գիտելիքների և գործնականի կապը, գիտության և տեխնիկայի կապը: Լաբորատոր աշխատանքների ճիշտ կազմակերպումն ու անցկացումը սովորողների մոտ զարգացնում է տրամաբանական-ճանաչողական, հետազոտական կարողություններ, գործիքների հետ վարվելու, դիտումներ և չափումներ կատարելու բազմաթիվ ունակություններ, զարգացնում է գործնական հմտություններ: Լաբորատոր աշխատանքի համար նախատեսված յուրաքանչյուր դաս ունի հետևյալ կառուցվածքը՝ 1-նախնական զրույց, 2-սովորողների կողմից աշխատանքի կատարում, 3-ստացված արդյունքների մշակում և ներկայացում, 4- արդյունքների ամփոփում:

Լաբորատոր աշխատանքների կատարումը սովորողների մոտ ձևավորում է անձնային հատկություններ, սարքավորումների հետ աշխատելու հմտություն, զգուշություն, մաքրություն, կազմակերպվածություն, արդյունքներ ստանալու ձգտում, անվտանգության կանոնների պահպանում, համագործակցային աշխատանք: Կան այնպիսի փորձեր, որոնք հնարավոր չեն կատարել լաբորատոր սարքավորումների պակասով պայմանավորված, կիրառում ենք S<S համակարգը:

- ❖ Նախագծային մեթոդ

Նպատակը ստեղծելու պայմաններ երեխաների ինքնուրույնության բացահայտման, աստիճանական ինքնուրույնության զարգացման, ստեղծագործական ներուժի ակտիվացման, կարողությունների բացահայտման, յուրաքանչյուր երեխայի կրթության անհատական ուղու ստեղծման համար՝ որոնողական աշխատանքների միջոցով: Խնդիրները

- ակտիվացնել իմացական հետաքրքրությունները՝ որոնողական և ստեղծագործական ինքնաարտահայտման միջոցով
- ձևավորել ժամանակակից տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու տարրական կարողություններ

- զարգացնել քննադատական մտածողություն և վերլուծելու ունակություններ
- զարգացնել կարողություններ մեծերի օգնությամբ, իսկ հետագայում նաև ինքնուրույն խնդրի լուծման հնարավոր մեթոդների բացահայտման համար
- զարգացնել երևակայություն և կոմունիկատիվ ունակություններ
- դաստիարակել հարգալից վերաբերմունք ընկերների և մեծահասակների հանդեպ և նրանց աշխարհայացքի նկատմամբ

Նախագծային մեթոդի արդիականությունը

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ: Այս պայմաններում կարևոր է կրթության դերի վերաիմաստավորումը : Կրթական փոփոխությունները, զարգացման ուղղություններն ու տեմպերը մանկավարժներից նույնպես պահանջում են սովորողի տարիքին համապատասխան մանկավարժական պրոցեսի կազմակերպման նոր ձևեր: Այս մեթոդներից մեկը նախագծային տեխնոլոգիան է:

Նախագծային մեթոդի առավելությունը

Սովորողի գործունեության ընթացքում, յուրաքանչյուր տարիքում կարող է բացահայտվել հիմնական, այդ ժամանակահատվածին բնորոշ, ինքնուրույն և մեծահասակների հետ համատեղ գործունեության բովանդակությունը: Դասընկերների հետ համատեղ գործունեությունը ընկալվում է որպես համագործակցություն, որը ենթադրում է կողմերի համահավասար մասնակցություն և փոխադարձ հարգանք:

Նախագծային գործունեության կազմակերպումը

Մեթոդը հնարավորություն է ընձեռում մանկավարժին իրականացնել գրեթե բոլոր կրթական ոլորտների ինտեգրացիա. հետազոտական և որոնողական աշխատանքներ, խոսքի զարգացում և հաղորդակցում ,կերպարվեստ և գեղ. գրականություն, խաղային գործունեություն:

Մեթոդի ներառականությունը

- ✓ նախագծային մեթոդը անհատականության վրա հիմնված ուսուցման ձև է
- ✓ մեթոդը թույլ է տալիս հաշվի առնել երեխայի հոգեկան և ֆիզիկական վիճակը՝ապահովելով իրատեսական և իրագործելի ուսումնական, իմացական, կոմունիկատիվ ծանրաբեռնվածություն
- ✓ մեթոդի իրագործման ընթացքում անհրաժեշտ է տարբեր մասնագետների ներգրավվածությունը, ինչը կնպաստի երեխայի խնդրի բազմակողմանի լուծմանը թիմային մոտեցմամբ
- ✓ ծնողները կրթական գործընթացի ակտիվ մասնակիցներն են, ինչը առավել անհրաժեշտ է ներառական կրթության կարիզ ունեցող երեխաների համար:

Մեր օրերում կրթության առջև ծառայել է մի կարևոր խնդիր` ուսուցման կազմակերպման ձևերի փոփոխության հարցը: Կրթության նորովի կազմակերպման ռազմավարություն է հանդես գալիս ուսուցման կոնպետենցիոն մոտեցը, որը ներմուծվել է կրթության մեջ բնութագրելու համար

մարդու անհրաժեշտ այն որակների համակարգը, որն ապահովում է նրա գործունեության արդյունավետությունը, մասնակցությունը հասարակական տարբեր ոլորտներում: Գիտության տեխնիկայի , արագ զարգացման պարագայում կարևոր նշանակություն ունի սովորողների ինքնուրույնության զարգացումը, որն էլ խթանում է վստահություն սեփական ուժերի հանդեպ: Գիտելիքների հետ միասին սովորողների մոտ պետք է զարգացնել նաև սոցիալական որակներ՝ նախաձեռնողականություն, հանդուրժողականություն, ստեղծագործական ունակություններ, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողություն: Կարևոր է նաև հաղորդակցական կարողությունների ձևավորումը, որի հիմքը պետք է դրվի դպրոցում:

Փորձարարական մաս

Հետազոտությունս իրականացրել եմ 7-րդ դասարանում: Փոխել եմ դասավանդման մեթոդիկան, այն էապես տարբերվում է իմ ավանդական դասից: Բոլոր իմ նախկին դասերում առաջնային դերում եղել է ուսուցիչը: Իսկ հիմա շեշտը դրված է սովորել սովորեցնելուն, կատարվում է ուսուցչի ու սովորողի դերերի փոփոխություն:

Սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունների զարգացմանն ուղղված դասի օրինակ ֆիզիկա առարկայից:

Փորձնական դաս 1

N	Դասարան- 7-րդ դասարան	4 աշակերտ	1տղա 3աղջիկ	
1.	Առարկան- ֆիզիկա			
2.	Ուսուցիչ՝ Մկրտչյան Կարինե			
3.	<u>Դասի թեման</u> - Ֆիզիկայի ուսումնասիրման առարկան, ֆիզիկական երևույթներ			

4.	<u>Դասի նպատակը.</u> Ձևավորել ինքնուրույն աշխատելու հմտություններ: Արժևորել ստեղծագործ մոտեցումն ուսումնասիրվող նյութի վերաբերյալ			
----	---	--	--	--

5.	<u>Դասի վերջնարդյունքները.</u> սովորողը կկարողանա՝ ճիշտ վերլուծել և տարբերակել ֆիզիկական երևույթները, կարողանա կատարել ճիշտ եզրահանգում, միմյանց սովորեցնել ու կատարել ինքնազնահատում:			
6.	<u>Դասի մեթոդը - փոխներգործում</u>			
7.	<u>Դասի ընթացքը</u>	Կազմակերպչական մաս		2րոպե
8.	<u>Խթանման փուլ</u>	Դասարանը բաժանել 4 խմբի		
		Յուրաքանչյուր խմբին ներկայացվում են ֆիզիկական մարմինների պատկերներ: Խմբերը պատասխանում են , թե ինչ են պատկերվածներկայացնում են, թե ինչով են տարբերվում տրված ֆիզիկական մարմիններն իրարից:		5 րոպե

		Ներկայացնում են առաջադրանքը:		
--	--	---------------------------------	--	--

		Հետևում են ցուցադրված սահիկաշարին: Հաջորդ քայլը- Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է ֆիզիկական մարմիններ և նշում նյութը:		5րոպե
		Յուրաքանչյուր խումբ ստանում է նյութ, որը պետք է լրացնել: Նշում են երևույթները:		5րոպե
		Հնչեցնում են բացատրություններ :		5րոպե
9.	<u>Իմաստի ընկալման փուլ</u>	Ձևավորել նոր խմբեր` 2 ական միավորելով: Նոր խմբերը ներկայացնում են բացատրություններ:		10 րոպե

10.	<u>Կշռադատման փուլ</u>	Ուսուցիչը կատարում է հետադարձ կապ: Ստուգում է յուրաքանչյուր խմբի կատարողականը, կատարում է շտկումներ: Ուսուցիչը սևեռում է նրանց ուշադրությունը պատճառահետևանքային կապի վրա: Կատարվում է անդրադարձ		10 րոպե
11.	<u>Գնահատում</u>	ձևավորող գնահատում-ինքնագնահատում		5 րոպե

Ինքնագնահատման թերթիկ

Ազգանուն, անուն, հայրանուն

	1խումբ	2-րդ խումբ	3-րդ խումբ	4-րդ խումբ
Կատարողական (+/-)				

Փորձնական դաս 2

Դասի թեման` Գործնական աշխատանք – Չափել փայտե չորսուի երկարությունը տարբեր սանդղակ ունեցող քանոնների օգնությամբ:

Անհրաժեշտ պարագաներ, սարքեր- գիրք, տետր, գրիչ, մատիտ, փայտե չորսու, տարբեր սանդղակ ունեցող քանոններ

Հիմնական հասկացություններ- Չափիչ սարք, չափման սահման, բաժանման արժեք, չափման սխալ:

Դասին կիրառվող մեթոդներ-Մտազրոհ, աշխատանք զույգերով, գործնական աշխատանք

Դասի նպատակը`- կրթական – Աշակերտներին սովորեցնել ճիշտ գնահատել չափիչ սարքերի չափման սահմանը, բաժանմունքի արժեքը որոշումը, չափման սխալը գտնելը:

Վերջնարդյունք - Ինքնուրույն աշխատանքի զարգացում, նախաձեռնողականության խթանում և նպատակին հասնելու կարողություն:

Դասի ընթացքը

Կազմակերպչական մաս

Խթանման փուլ՝ «մտազրոհ» մեթոդով սովորողներին նախապատրաստել գործնական աշխատանքի կատարմանը, բացահայտել սովորողների գիտելիքները առաջադրելով հետևյալ հարցերը.

- Բերել ֆիզիկական մեծությունների օրինակներ
- Ինչ ֆիզիկական սարքեր գիտեք
- Ինչ է չափիչ սարքի սանդղակը
- Ինչն են անվանում սանդղակի բաժանմունքի արժեք
- Որն է սարքի չափման սահմանը
- Ինչպես են որոշում չափման սխալը
- Ինչ է ուղղակի ,անուղղակի չափումը

Սովորողները աշխատում են զույգերով:

Իաստի ընկալման փուլում- սովորողները աշխատում են զույգերով: Յուրաքանչյուր զույգ ստանում է

համապատասխան հանձնարարությունը: Աշակերտները կատարում են աշխատանքը և ներկայացնում չափումների արդյունքը:

Կշռադատման փուլ- Ընդհանուր քննարկում են և պատասխանում հետևյալ հարցերին.

- Հնարավոր է չափել ֆիզիկական մեծությունը բացարձակ ճշտությամբ առանց սխալի
- Ինչու ենք ստացել չափման սխալի տարբեր արժեքներ
- Ինչից է կախված չափման սխալը

Սովորողների պատասխանները պարզաբանվում և գնահատվում են:

Տնային հանձնարարություն

Միլիմետրական քանոնի օգնությամբ չափել ֆիզիկայի դասագրքի թերթի հաստությունը:

Անդրադարձ՝ վերլուծություն

- դասից հետո պարզեցի սովորողների համար ինչ հարցեր են մնացել անհասկանալի և պարզաբանման կարիք ունեն
- Սովորողները ցուցաբերեցին ինքնուրույնություն, ակտիվություն
- Կարողացան տեսական գիտելիքները կիրառել գործնականում
- Աճում էր հետաքրքրությունը առարկայի նկատմամբ

Փորձնական դաս 1

Դասարան 7-րդ

Դասի թեման՝ Ինտերցիայի երևույթը

Դասին անհրաժեշտ ցուցադրական սարքեր և նյութեր՝ թեք ձուռ, գնդիկ, ավազ, պաստառ, գունավոր թղթեր

Դասի նպատակը՝ իմանա ինտերցիա երևույթի մասին, գաղափար կազմի երևույթի ֆիզիկական հետևանքների մասին, ինքնուրույն օրինակներ բերի և կատարի եզրահանգում, տարբերի ինտերցիայի դրական և բացասական կողմերը:

Դասի հիմնական հասկացությունները՝ ինտերցիայի երևույթ, արգելակման ճանապարհ

Դասի տիպը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի ընթացքը

Դասը սկսվում է դասագրքում ներկայացված փորձերի կատարումով, առանց որևէ բացատրության:

/10րոպե/

Փորձերն ավարտելուց հետո ուսուցիչը դիմում է դասարանին. /10 րոպե/

- Ի՞նչ տեսանք:
- Ինչու՞ գնդակը կանգ առավ:
- Ավազը հեռացնելուց հետո էլ ինչու՞ գնդակը, այնուամենայնիվ, կանգ առավ:

Գունավոր թղթերի վրա գրված բոլոր պատասխանները երեխաները ամրացնում են գրատախտակին:

Ուսուցիչը հանձնարարում է կարդալ դասանյութը և ինքնուրույն պարզել, թե արդյո՞ք ճիշտ են պատասխանել:/15 րոպե/

Իմաստի ընկալման փուլում կատարում են պատասխանների քննարկում, որի ընթացքում հստակեցվում են ճիշտ պատասխանները:

1. Մարմինը ե՞րբ է շարժվում
2. Մարմինը ե՞րբ է գտնվում դադարի վիճակում:

Կշռադատման փուլում սովորողները կարողանում են ինքնուրույն պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ:/10 րոպե/

Դասի վերջում կատարում են անդրադարձ՝ վերջնարդյունքների ամփոփում :

Սովորողները կարողացան ինքնուրույն օրինակներ բերել առօրյա կյանքից, կարողացան ներկայացնել երևույթի պատճառահետևանքային կապերը և հետազայում կապաշտպանվեն ինտերցիայի վնասակար ազդեցություններից:

Դասի վերջում եկա այն եզրակացության,որ նախ փորձը նպաստեց սովորողի ճանաչողական և տրամաբանական մտածողության զարգացմանը, որի արդյունքում, նրանք կարողացան ինքնուրույն եզրահանգումներ կատարել, ստեղծագործաբար մոտենալ առաջադրված աշխատանքին և ցուցաբերեցին նախաձեռնողականություն;

Վերլուծություն

Առաջին դասի անցկացման ժամանակ փոխվեց իմ կարծիքը նոր ժամանակակից մեթոդների արդյունավետության վերաբերյալ: Թեման ընտրված էր «Ֆիզիկական երևույթներ» բաժնից: «Փոխներգործուն» մեթոդը հետաքրքրեց երեխաներին, նոր ձևավորված խմբերում ավելի ինտեգրվեցին, ինքնուրույն ենթախմբեր ստեղծեցին՝ հիմնականում զույգեր, հեշտությամբ հասան նպատակին: Կարևորն այն էր, որ սովորեցին նաև ինքնուրույն աշխատել, կարևորել խմբով աշխատելու նշանակությունը, լսել կարծիքներ, ինքնուրույն վերլուծել, կարծիքների հակադրությունից ինքնուրույն եզրահանգում կատարել: Երկրորդ դասին հանձնարարվեց «Գործնական աշխատանք», ձևավորվեց թիմային պատասխանատվություն, միմյանց օգնելու պատրաստակամություն: Մեծացավ թիմային աշխատանքի հմտությունը, օգտագործեցին S<S-ը՝ տեսասահիկից օգտվելու համար:

Սովորողների մոտ բարձրացավ դասին մասնակցելու ակտիվությունը, ինքնուրույնությունը նրանց մեջ ստեղծվեց մրցակցություն խմբի առաջ դրված առաջադրանքները բարձր մակարդակով կատարելու համար:

Երկու դասերի համար նախատեսել էի ձևավորող գնահատում, մի դեպքում ինքնագնահատման, մյուս դեպքում՝ փոխադարձ գնահատման միջոցով: Ես հասկացա առավել ակտիվ էին, որովհետև չկատարեցի միավորային գնահատում: Այն աշակերտները ովքեր խուսափում էին մասնակցել դասերին, առանց կաշկանդվելու սկսեցին մասնակցել:

Երրորդ դասը դարձյալ 7-րդ դասարանում թեման «Իներցիան» էր: Դասի վերջում կազմակերպվեց հարցուպատասխան, որը և հաճելի էր, և ուսուցանող:

Այսպիսով, ինտերակտիվ մեթոդների կիրառումով ուսուցումը հնարավորություն է տալիս սովորողներին ինքնահաստատվելու, միմյանց արդարացի գնահատելու, փոխզիջումների գնալու, որն էլ ապահովում է գործընթացի արդյունավետությունը: Մանկավարժական դերից բացի, ինտերակտիվ մեթոդների միջոցով ուսուցումն ունի նաև հասարակական գործառույթ: Սովորողները խմբերով աշխատելով ոչ միայն ձեռք են բերում համագործակցային բազմազան հմտություններ, այլև ինքնաձանաչման ավելի բարձր մակարդակ, որի շնորհիվ ստեղծվում է ճշմարիտ հետադարձ կապ:

Եզրակացություն

Հետազոտություն կատարելու համար ունեի սեղմ ժամկետ, այդ պատճառով նպատակահարմար եմ գտել հետազոտությունը կատարել նույն դասարանում:

Ամփոփելով ստացված արդյունքները համոզվեցի, որ սովորողների ինքնուրույնության, ստեղծագործության և նախաձեռնողականության ունակությունների զարգացումը պայմանավորված է ուսուցման գործընթացում կիրառված մեթոդների արդյունավետությամբ:

Ուսուցիչը ինքը պետք է գտնի այն ուղին, որ կարողանա մտնել սովորողի ներքնաշխարհը, բացահայտի այն մտավոր ներուժը, որը թաքնված է յուրաքանչյուր աշակերտի մեջ, նրանց դրդի մտածել, ինքնուրույն որոնողական աշխատանք կատարել, ճանաչել, բացահայտել անհրաժեշտ գաղափարները և դրանք դարձնել իրենը ու ստեղծագործաբար, նպատակային կիրառել կյանքում:

Սովորական ուսուցիչը պատմում է,
Լավ ուսուցիչը բացատրում է,
Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս,
Հանձարեղ ուսուցիչը՝ ոգեշնչում:

Վ.Ս.Սուխոմլինսկի

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Նեյլ Արդլի «101 զարմանահրաշ գիտափորձեր»
Անգլերենից թարգմանությունը՝ Տաթևիկ Հովսեփյան
Խմբագիր՝ Գագիկ Մելիքյան
Մանմար հրատարակչություն 2016թ.
2. Բնագետ 2 2016թ
3. Պ.Ծատուրյան «Զրույցներ ֆիզիկայի մասին»
Երևան «Աստղիկ» 1989թ.
4. Մանկավարժություն 2013թ. 3 էջ6, էջ 20